ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՅԱԼ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(3—10 օգոստոս 1980 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն եղբայրական սիրո ողջույն նախ Ձեզի Ամենապատիվ պատրիարք եղբայրներ հայոց Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո, ապա Ձեզի սրբազան արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, Ձեզի հոգեշնորհ վարդապետներ և արժանապատիվ քահանա հայրեր:

Ձեր միաբանական համագումարը ավետող՝ 5 ապրիլ 1980 թվակիր գիրը Տ. Եղիշե սրբազան պատրիարքի, Մեզի համար իրավ բարի լուր մը եղավ: Ահա նախաձեռնություն մը որ վստահ ենք թե պիտի դառնա ոչ միայն հանդիսավոր պահ մը հայ Երուսաղեմի տարեգրությանց մեջ, այլ նաև նշանակալից թվական մը մեր Մայր Եկեղեցվո հետագա գործունեության ճանապարհին:

Ուրեմն սրտանց կգնահատենք Տ. Եղիշե սրբազան Մեր Եղբայր այս նախաձեռնությունը և կաղոթենք որ Աստված Իր Սուրբ Հոգիով ներշնչե ու լուսավորե խորհրդակցությանց մասնակցողներուդ սրտերն ու մտածումները, հառավել շինություն մեր ժողովուրդի հոգևոր կյանքի և հառավել զորացում մեր առաքելական Մայր Եկեղեցվո:

«Չի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ իբրև տեսանեմ զկարգն ձեր և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս Յիսուս» (Կողոս. Բ 5):

Հայաստանյայց մեր Եկեղեցին, իր առաքելական սկզբնավորությամբ, մոտ երկհազարամյա պատմական իր կյանքով ու իրագործումներով ու իր ուղղափառ վարդապետությամբ, քրիստոնեական լույս հավատքը ստեղծագործորեն ապրող ու ինքնուրույն ճառագայթումով փառավորող ամենավավերական Եկեղեցիներեն մին կհանդիսանա մարդկային աշխարհին մեջ, այսպիսով անբաժանելի մասը ըլլալով Քրիստոսի տիեզերական Եկեղեցվո;

Հայաստանյայց Եկեղեցին՝ հայ ժողովուրդի ոգեկանության ու կրոնական տեսիլքներու մարմնացումն է, Քրիստոսի խոսքը համազգային վավերական ապրումի ու ստեղծագործ առաքելության վերածած, հարազատորեն հայկականության ձևերու մեջ:

Հայաստանյայց Եկեղեցին, համազգային է և հայկական՝ իր մայրենի լեզվով ու մատենագրությամբ, իր ճարտարապետությամբ, երաժշտությամբ ու սրբանկարչությամբ, իր ծեսով ու իր աղոթքներով, իր անհամար սրբավայրերով՝ սփռված ամբողջ պատմական Հայաստանի տարածքի վրա, իր ինքնագլուխ անկախ նվիրապետական կառույցով, իր հոգեբանությամբ և բազմադարյան իր բոլոր իրագործումներով, նաև իր հերոսական մաքառումներով վասն հավատոյ և վասն հայրենյաց:

Այս և նման բոլոր Մեր դատումները, արտահայտված տարբեր բանաձևումներով՝ ճշմարիտ են, որով իրավամբ մենք բոլորս, մեր գործունեության ճամբուն, կմխիթարվինք, կներշնչվինք ու արդարորեն կհպարտանանք: Այդքանը չի բավեր սակայն:

Այսօր, մեծ հարցը որ կծառանա մեր բոլորիս խղճին առջև այն է՝ թե մեր Եկեղեցին ինչպե՞ս կշարունակե իր առաքելությունը մեր օրերուն, և մենք այսօրվան հոգևորականներս ի՞նչ ոգիով, ի՞նչ իրագործումներով կներկայանանք մեր ժողովուրդին առջև:

Հարմար չենք գտներ այստեղ քննարկել այս հարցը իր բոլոր կողմերով: Կբավարարվինք հրավեր կարդալով, որ ամենքս լարենք մեր հոգեկան, իմացական և բարոյական ուժերը և առավել կազմակերպյալ, նպատակասլաց աշխատանք տանինք, մոտենալու համար մեր հերոսական Եկեղեցվո ոգեկանության պայծառ բարձունքներուն: Կհրավիրենք Ձեզ սիրեցյալ եղբայրներ Մեր, լսել ձայնը մեր պատմության, ձայնը մեր լուսաբնակ նախնյաց, ձայնը մեր հավատացյալ ժողովուրդի, և նվիրվիլ մեր բուն առաքելության՝ առավել հավատքով ու սիրով, առավել եռանդով ու լավատեսությամբ, առավել զերծ եսակեդրոն մղումներե և կողմնակի նկատումներե:

Մեր Եկեղեցին, իր ժողովուրդին հետ զոհ գնաց 1915-ի ցեղասպանության: Հազար-հազար վանքեր, եկեղեցիներ, սրբավայրեր ավերակի վերածվեցան: Նահատակվեցան բազմահազար հոգևոր սպասավորներ, փոշիի վերածվեցան բազմաթիվ կրոնական ու մշակութային կրթական հաստատություններ:

Բայց նախախնամողն Աստված իսպառ չլքեց մեր ազգն ու մեր Եկեղեցին: Առաջին համաշխարհային պատերազմեն հետո, Մեծ եղեռնի կրակներեն փրկված ափ մը տեսիլք ունեցող հոգևոր հայրեր, հերոսական ճիգերով սկսան վերակառուցել մեր Եկեղեցվո խոնարհած շենքը և պատրաստել հոգևոր սպասավորներու նոր սերունդներ: Այդ ճիգերը ի կատար ածվեցան մանավանդ այդտեղ, Հայ Երուսաղեմի պատրիարքության կամարներուն տակ, երջանկահիշատակ Տ. Եղիշե Դուրյան պատրիարքի հզոր և սուրբ շունչով սկզբնավորված, իսկ շատ ժամանակ չանցած, 1928-ին, ի գործ դրված նոր ճիգերով, Անթիլիասի մեջ վերակազմակերպվիլ սկսավ Կիլիկյան Աթոռը մեր Մայր Եկեղեցվո, եղբայրական անմիջական օժանդակությամբը Երուսաղեմի պատրիարքության և քաջալերանքովը Ամենայն Հայոց կաթողիկոսի: Հայաստանյայց Եկեղեցվո վերակազմակերպման ճիգերը շարունակվեցան առավել թափով նաև երկրորդ համաշխարհային պատերազմեն հետո, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին բարենպաստ նոր պայմաններու մեջ տակավ մտավ իր պատմական առաքելության հունին մեջ,

իբրև կեդրոն և Աթոռ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության:

Մեր ընտրությամբ 1955-ին նոր պայմաններու մեջ, Մենք զգացինք ու հավատացինք թե սկիզբ կառնե Հայաստանյայց Եկեղեցվո ծաղկումի բախտորոշ մեկ նոր շրջանը, համատեղ ու միասնական գործակցությամբը մեր նվիրապետության բոլոր չորս Աթոռներուն: Այդ գիտակցությամբ է որ 1956-ի փետրվարին Անթիլիաս եկանք և այդ ոգիով խոսք առինք Կիլիկյան Աթոռի երեսփոխանական ընդհանուր ժողովին: Բայց այդ օրերուն այնտեղ հայոց եկեղեցական ու հանրային կյանքը այնքան փոթորկված էր անիմաստ ներքին պայքարներով, կուսակցական անհեռատես դիրքավորումներով ու աներևույթ ազդեցություններով, որ Մեզ ոչ ոք չհասկցավ: Մնացյալը ծանոթ է Ձեզի:

Այսօր, կուզենք Ձեզի վկայել որ այդ օրերուն և հետագային, բոլոր անոնք որ չհասկցան Մեզ և չլսեցին մայրական աղերսանքը Սուրբ Էջմիածնի, մեղանչեցին ճշմարտության դեմ, մեղանչեցին Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովուրդի հիմնական և մնայուն շահերուն դեմ:

Այսօր, քսանհինգ տարիներ հետո առավել հստակ է այս ճշմարտությունը: Արդյոք այժմ կրնա՞նք հուսալ որ մենք ու Անթիլիասի Մեր եղբայրները պիտի կարողանանք գտնել ուղիղ ճամբան մեր Եկեղեցվո միության և մեր Աթոռներու միասնական գործակցության, որով սկիզբ առներ մեր բազմաչարչար Մայր Եկեղեցվո կյանքի շինության նոր լուսաբացը:

Համենայն դեպս մեր օրերը կրնանք նկատել նոր ժամանակաշրջան մը մեր Եկեղեցվո պատմական առաքելության ճանապարհին վրա: Հասած կնկատենք պահը, երբ մենք այսօրվաններս և որոշակի պետք է տեսնենք մեր ընելիքը, համոզված ըլլալով թե միացյալ ուժերով անհրաժեշտ է սկզբնավորել աշխատանքի նոր ոգի և նոր ոճ և նոր թափ, որպեսզի մեր Եկեղեցին՝ հաստատ ու վճռական գրավե իր հատուկ տեղը մեր ժողովուրդի կյանքին մեջ, թե՛ ի Հայաստան և թե՛ մանավանդ սփյուռքի տարածքի վրա, առավել պայծառատեսությամբ նվիրվելով իր բուն առաքելության, այսինքն՝ ավետարանչական գործին, նոր սերունդներու կրոնա-բարոյական դաստիարակության գործին, հայ հավատացյալները մեկտեղելու, միավորելու և անվտանգ պահելու գործին, անոնց հոգևոր ու մշակութային ինքնությունը պահպանելու գործին, Մայր Եկեղեցվո ներքին միությունը Սուրբ Էջմիածնով ամրապնդելու գործին:

Մեր Եկեղեցին, վճռապես ու գործարար կերպով տակավին չի գտնվիր իր այս բուն առաքելության ճամբուն վրա: Մեր հոգևորականությունը իբրև մեկ ու միակամ մարմին տակավին չունի անհրաժեշտ հստակությամբ պատկերացումը իր բուն կոչումին: Այս իրավիճակը սփյուռքի հայ կյանքին մեջ կխորհինք թե առավելապես ստեղծվեցավ Եղեռնի ահավոր ողբերգութենեն հետո, իբրև տեսակ մը բնական հետևանք նոր կացություններու և հոգեվիճակի, երբ մեր ժողովուրդը ցիր ու ցան եղավ աշխարհի ուղիներուն վրա, երբ առաջնահերթ նկատվեցավ բուժումը ազգային արյունոտ վերքերու: Այսպիսով Եկեղեցին ու հոգևորականը դարձան գործակիցներ և ուկեկիցներ միայն, այլ և այլ անուններով գործող հայկական կազմակերպություններու: Այս կացության վրա ավելցան նաև հայ քաղաքական կուսակցությունները, որոնք գործունեության գետին չունենալով հայրենի հողի վրա, իրենց ազդեցությունը, երբեմն նույնիսկ իրենց տիրապետությունը սկսան ի գործ դնել Եկեղեցիին և հոգևորականության վրա, իրենց հետապնդած քաղաքական ծրագիրներուն համաձայն: Հայտնի է բոլորիս թե այսպես է որ ստեղծվեցավ

1956-են հետո արտասահմանի մեր եկեղեցական ներքին տագնապը, տագնապ որ պատակտեց, երկուքի բաժնեց մեր Եկեղեցին ու հավատացյալ ժողովուրդը: Եթե հետեղեռնյան շրջանի համար կրնանք այս իրավիճակը բացատրելի ու բնական նկատել, մեր օրերուն սակայն այն պետք է այլևս նկատենք ժամանակավրեպ, հետևաբար անբնական ու վնասակար: Այս իրավիճակը Մենք այսօր կկամենանք Ձեր լուրջ ուշադրության հանձնել, մանավանդ որ ձեր օրակարգի վրա կգտնվի՝ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍՕՐ» հարցը, որ սերտորեն կապված է Մեր մտահոգության հետ:

Այս մտահոգությանց լույսին տակ, հայ հոգևորականը պարտի պատասխանատվությունը ստանձնել՝ տերը կանգնելու իր կրոնա-բարոյական դաստիարակչական գործին, տերը կանգնելու Հայ Եկեղեցվո միության և հայ հավատացյալ ժողովուրդի միասնության, անբաժանության ամրապնդման գործին: Հայ Եկեղեցին ու հոգևոր սպասավորը, որպեսզի նվիրվին իրենց բուն այս առաքելության, պետք է հեռու մնան արտասահմանի հայ քաղաքական հոսանքներու նկատմամբ թեր կամ դեմ դիրքավորումներե: Իսկ եթե արդի Հայաստանի մասին է խոսքը, անոնք պետք է մնան աղոթող՝ վերածընած մայր հայրենիքի խաղաղ ու անվտանգ կյանքի պահպանման համար, ինչ որ հայրենասիրական բնական արտահայտություն է: Հայ Եկեղեցին ու հոգևոր սպասավորը նաև հեռու պետք է մնան թեր կամ դեմ վերաբերմունք ճշտելե՝ միջազգային քաղաքական գաղափարախոսություններու և խմբավորումներու նկատմամբ: Իսկ եթե էկումենիկ եկեղեցական գործունեության գծով, Հայ Եկեղեցին ու հայ հոգևորականը, արդի աշխարհը և մարդկությունը հուզող հարցերով պիտի մտահոգվին, անոնք պետք է առաջնորդվին ավետարանական սիրո խաղաղարար ոգիով, միշտ և ամեն տեղ հանդես գալով որպես ժողովուրդներու խաղաղ գոյակցության և պետություններու համերաշխ գործակցության ջատագովներ:

Այլապես պիտի նշանակեր ժխտել կոչումը Քրիստոսի Եկեղեցվո, ժխտել մանավանդ կոչումը Հայ Եկեղեցվո: Պիտի նշանակեր Հայ Եկեղեցվո հրաժարումը իր համազգային հանգամանքեն, պիտի նշանակեր նվիրագործումը մեր Եկեղեցվո ներքին բաժանումներուն, պիտի նշանակեր հեռացնել Հայ Եկեղեցին իր միարար ու խաղաղարար պատմական առաքելութենեն:

Բոլոր քաղաքակիրթ ազգերու ծոցին մեջ կան քաղաքական կուսակցություններ, գաղափարական հոսանքներ, մշակութային, գիտական և այլ խմբավորումներ, սակայն Եկեղեցին այդ բոլորեն վեր կկանգնի, բոլորը իր մեջ միավորելու համար: Բոլոր կուսակցությունները և խմբավորումները բնական կերպով, անհրաժեշտորեն, իրենց սահմանումով իսկ հատվածական են, բառին ոչ բացասական իմաստով, նաև հարափոփոխ են ու ժամանակավոր, առավել կամ նվազ չափով: Մինչ Եկեղեցին չի կրնար հատվածական ըլլալ իր կոչումով ու իր սահմանումով իսկ, չի կրնար հարափոփոխ ըլլալ, չի կրնար ժամանակավոր ըլլալ:

Տարրական ճշմարտություններ են ասոնք որ պետք է ուղիղ և հստակ հասկնալ, արդար, շինարար արդյունքներով կարենալ գործելու համար մեր հավատացյալ ժողովուրդի ծոցին մեջ:

Մեր Մայր Եկեղեցին համազգային հոգևոր առաքելության բազում դարերու փորձառություն ապրած է անցյալի մեջ, մինչև մեր դարու սկիզբները, երբ ինչպես վերև ընդգծեցինք, հետեղեռնյան ժամանակաշրջանին ան ենթարկվեցավ սփյուռքահայ կյանքի ներքին վերիվայրումներուն:

Հօգուտ Հայ Եկեղեցվո համազգային հոգևոր առաքելության, կարևորությամբ հիշենք այստեղ նաև այն հիմնական իրավական իրողությունը՝ թե սիյուռքի տարածքի վրա, հաչս հյուրընկալ պետությանց, հայերը իրենց ինքնությունը իրավապես կրնան պահպանել և ճանաչում ստանալ իբրև կրոնական համայնքներ, այսինքն իբրև Եկեղեցի: Այս ճշմարտությունը հաճախ շատերու կողմե կանտեսվի:

Մեր մտահոգությունները և Մեր խոհերը ի մի բերելով, կկամենանք եզրակացնել՝ թե արտասահմանի հայության ինքնության ամբողջ ու անվնասանգ պահպանման ամենաամուր, ամենահայկական, ամենատևական ու ամենաօրինական հիմքը Հայ Առաքելական Եկեղեցին է թե՛ գործնական և թե՛ իրավական տեսակետներե:

Բոլոր անոնք որ արտասահմանի հայ կյանքի մեջ կամա թե ակամա, գիտակցաբար կամ միամտաբար, կփորձեն տկարացնել ամուր հիմքերը բազմադարյան Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցվո, բոլոր անոնք կգտնվին ոչ միայն հակաքրիստոնեական այլ և հակազգային դիրքերու վրա: Նման փորձ կատարեցին վերջին երկու տասնամյակներուն նաև քանի մը հայ կաթոլիկ հեղինակներ, նպատակ ունենալով ժխտել մեր Մայր Եկեղեցվո առաքելականությունը, ժխտել մեր Մայր Եկեղեցվո ինքնագլուխ անկախ իրավականոնական դիրքը, ժխտել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վավերականությունը իբրև կեդրոն Հայ Եկեղեցվո: Շատ, շատ տխուր է հաստատել այս իրողությունը: Մենք անձամբ երբեք չէինք կրնար խորհիլ թե կրնան գտնվիլ նման հոգևոր հայրեր Մխիթարյան միաբանության շարքերուն մեջ, միաբանություն որ իր գիտական և կրթական վաստակով միշտ եղած է և այսօր ալ է՝ առարկան Մեր գնահատանքին: Անհրաժեշտ է բարի խորհուրդ տալ մեր Մխիթարյան եղբայրներուն, որ աչքի լույսի պես պահեն-պահպանեն Ալիշանյան ոգին և չշեղին իրենց գիտական և կրթական առաքելության ճամբեն: Այդ կպահանջե նույնպես արդի էկումենիկ ոգին, որ մեր օրերուն պայծառորեն կճառագայթե նաև Հռոմեական կաթոլիկ եկեղեցվո կեդրոն՝ Վատիկանի բարձունքեն:

Մեր բոլորիս խղճի պարտքն է հստակել, բյուրեղացնել և գործնական ծրագրի վերածել Հայաստանյայց Եկեղեցվո նվիրական առաքելությունը, այսօր մեզի հանձնված ժողովուրդին կյանքին մեջ:

Մեր բոլորիս խղճի պարտքն է, իրավ հավատքով դեպի մեր սուրբ գործը, անձնուրացությամբ աշխատանքի լծվինք, միակամ ու միախորհուրդ, մեկս մյուսին նեցուկ, մեկս մյուսին հնազանդ «երկյուղովը Քրիստոսի», աշխատանքի լծվինք միշտ հիշելով Ավետարանի պատվիրանը թե «որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ամենեցուն ծառայ» (Մարկոս Ժ 45):

«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի Քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ Քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»:

Եվ «Այսուհետև եղբարք հաստատուն կացէք և պինդ կալարուք զաւանդութիւնն, զոր ուսարուք, եթէ բանիւ և եթէ թղթով մերով: Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս բարութեան» (Բ Թեսաղ. Բ 14—16): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 հուլիս 1980 թ.